**Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարան**

«ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ՝ ԳՐՔԻ ՀԱՆԳՐՎԱՆ»
Գիտաժողով՝ նվիրված Մայր Աթոռ Ս․ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի հիմնադրման 10-ամյակին
(06, հոկտեմբերի, 2022 թ․)

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2022 թ. լրանում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի հիմնադրման 10-ամյակը (2012-2022 թթ.)։ 10-ամյա գործունեության ընդառաջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանը նախաձեռնել է «Սուրբ Էջմիածինը՝ գրքի հանգրվան» խորագրով գիտաժողովը, որը տեղի կունենա 2022 թ. հոկտեմբերի 6-ին։

**Գիտաժողովի զեկույցների բնագավառներն են՝**

- Հայ գրավոր մշակութային ժառանգություն
- Հայ տպագրության պատմություն
- Գրադարանագիտություն
- Գրահրատարակչական գործ

Նախապատվությունը կտրվի այն զեկույցներին, որոնք նշյալ բնագավառների շրջանակներում, առանց դարաշրջանների սահմանափակման, կառնչվեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությանը։

**Ժամանակացույց**

- Հայտերի ընդունման վերջնաժամկետ՝ մարտի 31։
- Զեկույցների վերջնական տարբերակների ընդունում՝ օգոստոսի 1։

Բոլոր ելույթները պետք է համապատասխանեն գիտաժողովի խորագրին և ներկայացված բնագավառներին։

Ընտրված զեկույցները տպագրվելու են առանձին ժողովածուի տեսքով։

Նախատեսվում է գիտաժողովն անցկացնել առկա ձևաչափով։

Աշխատանքային լեզուն հայերենն է։

Մասնակցության համար լրացնել հայտը։

Հեռախոս՝ (+374) 10 51-72-91, (+374) 91 03-33-55
Էլ. փոստ՝ book.conference2022@gmail.com։
Գիտաժողովի համակարգող՝ Մայա Գրիգորյան

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի**
**«Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարան**